ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ - ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր - Վասպուրական. Արծրունյաց թագավորություն, հոգևոր – մշակութային կյանք, աղբյուրագիտություն, պատմագրություն, պատմիչներ, սկզբնաղբյուրներ, աշխատություններ, հոդվածներ:

Վասպուրականի Արծրունյաց թագավորության (908 - 1021) հոգևոր-մշակութային կյանքի պատմագրությունը ներկայացնելը և գնահատելը կարևորվում է այն տեսանկյունից, որ հնարավորություն է ընձեռում ճշգրիտ պատկերացում կազմելու, թե այդ կյանքը զարգացման ինչպիսի՞ օրինաչափություններ է ունեցել, ավելի շատ նրա ո՞ր ոլորտներն են զարգացել, ինչո՞վ էր դա պայմանավորված և ինչքանով էր նպաստում պետության ամրապնդմանը:

Հոգևոր-մշակութային կյանքի պատմագրությունը գնահատելը դյուրին խնդիր չէ, որովհետև միայն այդ ոլորտին վերաբերվող աշխատություններ գրեթե չկան, որը նշանակում, որ պետք է ուսումնասիրել ողջ թագավորության պատմությանն առնչվող պատմագիտական բնույթի գործերը և ապա միայն անդրադառնալ այն գործերին, որոնք վերաբերվում են կոնկրետ այդ ոլորտին:

Վասպուրականի Արծրունյաց թագավորության ժամանակաշրջանի պատմությանն անդրադարձել են բազում հայ պատմիչներ: Դրանցից նախ և առաջ ուզում ենք առանձնացնել հայոց կաթողիկոս Հավհաննես Դրասխանակերտցուն: Նրա աշխատությունը[1] լույս է սփռում Վասպուրականի թագավորության, մասնավորապես Գագիկ Արծրունու գործունեության մանրամասների վրա: Նրա կաթողիկոսության տարիներն (897-929 թթ) ընթացել են Հայաստանի համար շատ բարդ քաղաքական իրադարձությունների պայմաններում, որոնք նա նկարագրում է իր աշխատության մեջ: Որպես կաթողիկոս Հովհ. Դրասխանակերտցին հաճախ խաղաղության միջնորդ է եղել իրար հետ ընդհարվող իշխանների հա-

[1] Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի,** Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1913, նաև՝ Երևան, 1996:

մար, կատարել է նաև դիվանագիտական առաքելություններ՝ Բագրատունիների թագավորությունը օտար ոտնձգություններից զերծ պահելու նպատակով: Նրան նույնիսկ կալանավորել է Սաջյան Յուսուֆ ամիրան: Կարողանալով փախչել բանտից՝ նա հակադրված է եղել ապաստանելու հայկական տարբեր գավառներում, ինչպես նաև՝ Աղվանքում և Վրաստանում: Կյանքի վերջում նա ապաստանել է Վասպուրականում, ուր և շարադրել է իր պատմությունը: Այդ պատմությունը նրանով է գնահատելի, որ հեղինակը որպես դեպքերի անմիջական ականատես է նկարագրում Գագրկ Ա-ի գործունեությունը: Իսկ ընդհանրապես Հովհ. Դրասխանակերտցու գործն ընդգրկում է պատմական շատ մեծ մի ժամանակաշրջան: Այն սկսվում է հնագույն առասպելական ժամանակներից և ավարտվում է 924 թ. դեպքերի նկարագրությամբ: Կարևոր է, որ պատմիչը, որը տիրապետում է քերթողական արվեստին, իր ժողովրդի ու հայրենիքի դժբախտությունը բացատրում է երկու հիմնական պատճառով. ա) օտար նվաճողների երկդիմի և թշնամական քաղաքականությամբ, բ) ներքին անհամաձայնությամբ և անմիաբանությամբ: Եվ պատահական չէ, որ պատմիչը քրիստոնեական բարոյախոսության սկզբունքներով խորհուրդ է տալիս իր հայրենակիցներին՝ լսել իրար, եղբայրասպան չլինել և միաբանվել, որի դեպքում ոչ թե թշնամիները կհաղթեն, այլ հայերը:

Հովհ. Դրասխանակերտցու աշխատության օգտագործումը շահեկան է ոչ այնքան հոգևոր-մշակութային կյանքի ուսումնասիրության տեսակետից, այլ պատճառների և հիմքերի ճիշտ ընկալման, որոնք հանգեցրեցին Վասպուրականի Արծրունյաց թագավորության առաջացմանը մշակութային կյանքի ծաղկմանը:

Վասպուրականի թագավորության պատմությոանը համառոտ ձևով անդրադարձել է նաև Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկը)[1]: Նրա պատմությունը բաժանվում է երեք մասի, որոնք կոչվում են առաջին, երկրորդ և երրորդ հանդեսներ: Առաջին հանդեսը բաղկացած է հինգ գլուխներից, որոնցում հեղինակը խոսում է աշխարհի արարչության, Եգիպտոսի Պտղոմեոսների տիրապետության ժամանակաշրջանի, պարթևների, հռոմեացիների, Ալ. Մակեդոնացու և այլոց մասին: Առաջին հանդեսը նա ավարտում է առաջին Արշակունիների ժամանակաշրջանի համառոտ շարադրանքով: Երկրորդ հանդեսում, որը բովանդակում է վեց գլուխ, նա շարադրում է հայոց պատմությունը Տրդատ Գ-ից մինչև Արշակունիների անկումը (428թ) և ամփոփում Աշոտ Բագրատունու գահակալության ժամանակաշրջանով: Այս բաժնում նա տալիս է նաև Գրիգոր Լուսավորիչից

[1] Տե՛ս **Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ),** Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:

մինչև Սահակ Պարթևը աթոռակալած հայոց կաթողիկոսների գործունեության համառոտ պատմությունը:

Երրորդ հանդեսում Տարոնեցին ընդհանուր գծերով շարադրում է Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի պատմությունը,այնուհետև անդրադառնում է Աշոտ Երկաթին, Աբասին, Աշոտ Գ-ին, Սմբատ Բ-ին և Գագիկ Ա-ին: Երրորդ հանդեսն ավարտում է 1004 թվականով:

Վասպուրականի թագավորության պատմության հետ կապված մեզ համար մասնավոր հետաքրքրություն է առաջացրել այն, որ նա երրորդ հանդեսում ներկայացնում է Արծրունի թագավորների տոհմագրությունը, որի բացակայության դեպքում ոչ մի կերպ հնարավոր չէր լինի կազմել Գագիկ Արծրունի թագավորի հաջորդների ամբողջական ցուցակը:

Հոգևոր-մշակութային կյանքի զարգացման ընթացքի վերաբերյալ էլ նա շատ կարևոր տեղեկություններ է հաղորդում: Դրանք վերաբերվում են տասից ավելի խոշոր վանքերի (Կամրջաձոր, Հոռոմոս, Նարեկ, Հաղպատ, Սանահին և այլն) հիմնադրմանը, նրանց գրչության կենտրոնների, գիտնականների և հոգևոր առաջնորդների գործունեությունը: Նա անդրադառնում է եկեղեցաշինությանը, Տրդատ ճարտարապետի գործունեությանը Անիում:

Ճշմարիտ է, այս տեղեկությունները վերաբերվում են ոչ միայն Վասպուրականի թագավորությանը, բայց շահեկան են նրանով, որ օգնում են տպավորություն կազմել ընդհանրապես հայ մշակույթի զարգացման ուղղվածությունների մասին նշված ժամանակահատվածում::

Վասպուրականի Արծրունյաց թագավորության (առհասարակ այս տոհմի պատմության), ինչպես նաև հոգևոր-մշակութային կյանքի ուսումնասիրության համար անգնահատելի են Թավմա Արծրունու և Անանունի գործերը[1]: Արծրունին իրեն դրսևորում է որպես գնահատելի վերլուծական մտքի տեր և քաղաքական յուրօրինակ մտքի կրող, ինչպես նաև հայոց քրիստոնեական հավատի ջերմեռանդ պահապան պատմիչ:

Թովմա Արծրունու պատմությունը բաժանված է դպրությունների: Մինչև 2-րդ դպրության 5-րդ գլուխն ունի երկրորդական սկզբնաղբյուրային արժեք, որովհետև հեղինակը շարադրված իրադարձությունների ժամանակակիցը չէ: Ավելի արժեքավոր են 2-րդ դպրության 5-6-րդ գլուխները, ուր ներկայացված է արաբների դեմ հայերի մղած ազատագրական պայքարը: Սակայն, որպես սկզբնաղբյուր հատկապես արժեքավոր է վերջին՝ երրորդ դպրությունը: Այստեղ է, որ երևում է նրա քաղաքական բարձր մտածողությունը, քանզի ձգտում է բացահայտել պատմական իրադարձությունների պատճառահատևանքային կապերը, դրանց մոտենալ քննական հայացքով: Թովմա Արծրունին հայոց երկրին պատուհասած դժբախտությունների պատճառ է համարում հայ իշխանների ան-

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն,** Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1985:

միաբանությունը: Նա, լինելով Արծրունիների տոհմական պատմիչը, դրվատանքով ու գովեստով է խոսում նրանց մասին՝ ներկայացնելով նրանց հերոսական պայքարը արաբական տիրապետության դեմ: Սակայն, ճիշտ կերպով անմիաբանությունը համարելով հայոց դժբախտությունների պատճառ, նա մոռանում է, որ Արծրունիներն էլ էին անմիաբան և հակադրությունների մեջ էին Բագրատունիների հետ: Եվ նրանց այս անմիաբանությունն էր, որ հանգեցրեց Արծրունիների անկախ թագավորության առաջացմանը: Գնահատելի է Թովմա Արծրունու կողմից պատմության՝որպես գիտության նկատմամբ ունեցած մոտեցումը: Նա չի պատկերացնում պատմություն՝ առանց թվականների:

Թովմա Արծրունու պատմությունը շարունակել է Անանունը (ըստ երևույթին դարձյալ Արծրունյած տոհմից): Վերջինս եղել է հոգևորական անձնավորություն,ըստ երևույթին Աղթամարի Ս.Խաչ վանքի կրոնավոր: Այս ենթադրության համար հիմք են տալիս նրա հետևյալ տողերը. «Եա առաւել աստուածապսակ և բարեպաշտ և ամենիմաստ թագաւորն հայոց Գագիկ,որ իմաստութեամբ և ուղղափառ վարուքն իւրովք և կամօքն Աստուծոյ տիրեաց բազում աշխարհաց,զոր կայ յիշատակեալ ի սմա և խաղաղութեամբ պահեաց զամենայն աւուրս կենաց իւրոյ ի հինից թշնամեաց,և եղև առիթ շինութեան եկեղեցեաց ևս առաւել գերահռչակ և և ցքանչելագործ սուրբ եկեղեցվոյս սուրբ Խաչիս Աղթամարայ.ընդ որոյ հովանեավ շարագրեցավ Պատմութիւնս այս ի թուականութեանս հայոց յեօթն հարիւրերորդի յիսնորդի երկրորդի,և յաշխարհակալ թագաւորութեանն Ղազանի, հրամանավ և ծախիւք աստուածապատիվ և երջանիկ երիցս երանեալ ամենիմաստ հայրապետիս Հայոց տեառն Զաքարիայի,որ է յոյժ բարի,առատամիտ և աղքատասէր և աստուածային ձրիւքն բարգաւաճեալ և ի խնդրոյ աստուածարեալ գիտնական և արդիւնական վարդապետի,միանգամայն և արհիական աստիճանի արժանացելոյ տեառն Ստեփաննոսի,որ է ակն արևելեան և աթոռակալ մեծի Սիւնեաց տանն»[1]:

Այսպիսով պարզ է, որ Անանունն իր պատմությունը շարադրել է Ս. Խաչ վանքում: Բացի այդ՝ այն գրվել է Զաքարիա հայրապետի հրամանով և գիտնական-վարդապետ, Սյունաց թեմի աթոռակալ Ստեփանոսի խնդրանքով:

Անանունը թեպետ թվեր շատ քիչ է հրատարակում,բայց ունի փայլուն պատմելաոճ: Նրա իդեալ քաղաքական և մշակութային գործիչը Գագիկ Արծրունին է: Նա ձգտում է Բագրատունիների հետ համեմատություններում նախապատվությունը միշտ տալ Արծրունիներին: Գագիկ Ա-ի պառակտողական քայլերի մեջ էլ նա մեղադրում է Սմբատ Ա-ին, որը բնակա-

[1] Նույն տեղում, էջ 494-496:

նաբար ճիշտ չէ: Այս ամենով հանդերձ,գործն անզուգական սկզբնաղբյուր է Արծրունիների թագավորության շրջանում Վասպուրականի հոգևոր-մշակութային վերելքը ներկայացնելու առումով: Նա տվել է տեղի ճարտարապետական հրաշակերտ կոթողների ճշգրիտ նկարագրությունը:

Հաջորդ կարևոր սկզբնաղբյուրը պատկանում է Ուխտանեսին[1]: Նա այն գրել է Անանիա Նարեկացու հանձնարարությամբ՝ 10-րդ դարի երկրորդ կեսին: Ուխտանեսի աշխատության մեջ շարադրված են ոչ թե քաղաքական իրադարձություններ, այլ արծարծվում են հիմնականում կրոնա-դավանաբանական հարցեր: Այն բաղկացած է եղել երեք հատվածից. ա) «Զթիւ թագաւորացն և զհայրապետացն մերոյ», բ) «Զբաժանումն Վրաց և ի Հայոց միասնութենէ» և գ) «Զմկրտութիւն ազգին որ ծադն կոչի»: Առաջին և երկրորդ մասերը մեզ են հասել ամբողջությամբ, իսկ երրորդը՝ մասնակիորեն:

Առաջին հատվածը կազմված է Աստվածաշնչից, Մովսես Խորենացուց և այլ հեղինակներից քաղված տեղեկություններից՝ «հասարակաց» ընթերցանության և ուսուցողական նպատակներով: Այն սկսվում է Ադամի, Հայկի, Սեմի, Քամի, Հաբեթի ժամանակներից, խոսվում է վերջիններիս և նրանց հասած երկրների մասին:

Այնուհետև հեղինակը խոսում է հայոց առասպելական և իրոք պատմական դեմքեր հանդիսացող արքաների մասին, նրանց զուգընթաց թռուցիկ ներկայացնելով պարսից արքաներին և Հռոմի կայսրերին: Ըստ երևույթին Խորենացուց օգտվելով, Ուխտանեսը այնուհետև խոսում է Աբգար թագավորի քրիստոնեության ընդունման, ապա՝ Գրիգոր Լուսավորչի, Տրդատի, Հռիփսիմյանց կույսերի մասին՝ քննարկելով դավանաբանական խնդիրներ:

Երկրորդ հատվածում ներկայացվում է հայոց եկեղեցու՝ վրաց եկեղեցուց անջատման պատմությունը, հիմնականում հենվելով դավանաբանական պայքարի միջնադարյան ժողովուրդներից՝«Գիրք թղթոցի» տեղեկությունների հիման վրա: Ուխտանեսը վրաց եկեղեցու անջատման պատճառ է համարում վրաց Կյուրիոն կաթողիկոսի քաղկեդոնականությանն հարելը: Ինչ վերաբերվում է ծադերին, ապա՝ դրանք հայ քաղկեդոնականներ էին, որոնց դատապարտում է Ուխտանեսը, միաժամանակ տեղեկություններ հաղորդելով վերջիններիս տարածման գավառների, գյուղերի, քաղաքների, բերդերի և վանքերի մասին: Կարելի է պնդել, որ Ուխտանեսի գլխավոր նպատակը մեկն է՝ ամենաճշմարիտը համարել հայ քրիստոնեական առաքելական եկեղեցին և պայքարել նրանից ամեն տեսակի շեղումների դեմ:

[1] **Ուխտանես եպիսկոպոս,** Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871:

Մյուս սկզբնաղբյուրը, որն անկախ մշակութային կյանքի վերաբերյալ տեղեկություններից, անհրաժեշտ էր օգտագործել ընդհանուր քաղաքական անցուդարձերի վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու համար, Մատթեոս Ուռհայեցու աշխատությունն է[1]: Այն ընդգրկում է 952-1136/37 թթ. դեպքերի հաջորդական շարադրությունը, ուր բնականաբար, անդրադարձներ կան նաև Վասպուրականում ծավալված դեպքերին:

Սրանք են այն հիմնական սկզբնաղբյուրները ,որոնք պետք է օգտագործել Վասպուրականի Արծրունիների թագավորության քաղաքական պատմության ուսումնասիրության համար, առանց որի դժվար է ճիշտ հասկանալ մշակութային կյանքի զարգացման պատճառները, քանի որ մեկը մյուսի հետ շաղկապված են:

Խնդրին առնչվող կարևոր աշխատույթուն է Միքայել Չամչյանի գործը[2]: Մ. Չամչյանն իր հղված հատորում, որն սկսվում է 5-րդ դարից (նրա պատմությունը հասցվում է մինչև 1784 թվականին), հանգամանորեն անդրադառնում է նաև Բագրատունիների թագավորության առաջացման պատմությանը, նրանից այլ, այդ թվում Արծրունիների թագավորության տրոհմանը: Հենվելով մեր հիշատակած սկզբնաղբյուրների վրա և համադրելով դրանց տեղեկությունները, Մ. Չամչյանը ներկայացնում է այն պատճառները, որոնք նպաստեցին Գագիկ Արծրունու կողմից առանձին թագավորության առանձնացմանը, սկսած Գագիկ Ա-ից՝ Բագրատունիների թագավորների հետ Արծրունիների հարաբերություններին, Արծրունիների պետության զարգացման ընթացքին մինչև Սենեքերիմի գաղթը (1021թ.): Հեղինակն անդրադառնում է Արծրունիների շինարարական գործունեությանը ևս (մասնավորապես Գագիկ Արծրունու), ընթերցողի համար ստեղծելով այն տպավորությունը, որ, իրոք թագավորությունն ապրում է հագևոր ծաղկման և վերելքի մի ժամանակաշրջան:

Նույնը պետք է շեշտել նաև Լեոյի աշխատության մասին[3]:

Լեոն Վասպուրականի Արծրունյաց թագավորությանն անդրադառնում է հղված հատորի «Գիրք երկրորդի» առաջին մասում, որը կոչվում է «գավառական անկախություններ»: Հեղինակը տալիս է այդ թագավորության ձևավորման ողջ գործընթացը: Հետաքրքիր ձևով է նա մատուցում Գագիկ Ա-ի և Սմբատ Ա-ի փոխհարաբերությունների պատմությունը, այն դրդապատճառները, որոնք հանգեցրեցին Վասպուրականի թագավորության հռչակմանը: Հատկապես խիստ շահեկան են Լեոյի անդրադարձները Գագիկ Արծրունու շինարարական աշխատանքներին (քաղա-

[1] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի,** ժամանակագրութիւն,Վաղարշապատ,1898, նաև՝ Երևան, 1991:

[2] Տե՛ս **Միքայել Չամչյանց,** Հայոց պատմություն, Բ հատոր, Երևան,1984:

[3] **Լեո**, Հայոց պատմություն, միջին դարեր, տես Երկերի ժողովածու, երկրորդ հատոր, Երևան, 1967:

քաշինությանը, եկեղեցաշինությանը): Մասնավորապես Աղթամար քաղաքի, Ոստանի, Ս.Խաչ եկեղեցու կառուցման Լեոյի նկարագրությունները այն ճիշտ տպավորությունն են ստեղծում, որ իսկապես մշակույթն այս թագավորությունում վերելք ու ծաղկում էր ապրում:

Ընդհանրապես Վասպուրականի Արծրունյաց թագավորության պատմության վերաբերյալ գնահատելի ուսումնասիրություններ է ստեղծել պատմաբան Վրեժ Վարդանյանը: Նա գրել է և՛ հոդվածներ և՛ մենագրություններ: Հոդվածներից մեկը նվիրված է Վասպուրականի թագավորության սահմաններին[1]:

Այս ուսումնասիրության մեջ նա հենվելով պատմական սկզբնաղբյուրների վրա, փորձում է ճշտել Վասպուրականի Արծրունյաց թագավորության սահմանները, ցույց տալ,թե ինչ գավառներ էր նա ընդգրկում: Սահմանները ճշտելուն զուգընթաց նա փաստորեն տալիս է Վասպուրականի թագավորության ձևավորման, զարգացման և անկման պատմությունը: Միանշանակորեն ընդունելի են նրա հետևյալ դատողությունները. «-Տասներորդ դարում Հայաստանն ապրում է ֆեոդարական մասնատվածության ժամանակաշրջան:Հայաստանի հազիվ գլուխ եկած պետական ամբողջությունը սկսում է տալ իր առաջին ճեղքերը:Առաջանում են տեղական նշանակություն ունեցող մի քանի թագավորություններ,որոնցից առանձնակի դեր ուներ Վասպուրականի թագավորությունը,որը **Հայաստանի բոլոր տեղական թագավորություններից տնտեսական, քաղաքական և մշակութային ամենաբարձր ծաղկման հասավ»**[2]: (Ընդգծումը մերն է - Ա. Ն.): Իսկապես սա անհերքելի ճշմարտություն է :

Ոչ պակաս գնահատելի է նաև Վ. Վարդանյանի մյուս հոդվածը [3]:

Այստեղ նա տալիս է Գագիկ Արծրունու և Յուսուֆ ամիրայի փոխհարաբերության պատմությունը, բացահայտում է վերջինիս դավադիր ձգտումները, Գագիկի խելացի, խուսանավողական քաղաքականությունը և, ի վերջո, նրա՝ թագավոր հաստատվելու դրվագների մանրամասները: Գնահատելին այն է, որ հոդվածում ապացուցվում է Գագիկի՝ Բագրատունիների թագավորների հետ միասնաբար թշնամիների դեմ պայքարելու ձգտման առկայությունը: Եվ դա շատ կարևոր էր երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման տեսանկյունից: Իր այս հոդվածներում հնչեցրած տեսակետներն նա ավելի է հիմնավորել Վասպու-

---

[1] **Վարդանյան Վ. Մ.,** Վասպուրականի թագավորության սահմանները 9-11-րդ դարերում, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1969, թիվ 4, էջ 228-236:

[2] Նույն տեղում,էջ 228:

[3] **Վարդանյան Վ. Մ.** ,Վասպուրականի 910-930-ական թթ. Պատմության շուրջը, տե՛ս նույն տեղում, 1980, թիվ 1, էջ 215-222:

րականի Արծրունյաց թագավորության ամբողջական պատմությունը նվիրված իր մենագրությունում[1]:

Այնտեղ նա, նախ՝ ներկայացնում է Վասպուրական աշխարհը Արծրունյաց թագավորության նախօրյակին, Արծրունիների կողմից հայոց այս նշանավոր նահանգի որպես ազատագրական պայքարի օջախ լինելու հանգամանքը: Հատկապես կարևորություն է ներկայացնում այս գլխում հեղինակի կողմից լուսաբանված Գագիկ Արծրունու շինարարական անդրանիկ ջանքերը, որոնք «առաջ տարվեցին թե աշխարհիկ, թե եկեղեցական շինությունների գծով»[2]:

Հաջորդ գլխում արդեն նա տալիս է Վասպուրականի թագավորության պատմությունը 10-րդ դարի առաջին կեսին: Բնականաբար, այս շրջանի գլխավոր դեմքը Գագիկ Արծրունին էր, որի մշակութային - շինարարական բուռն գործունեությունն էլ վերլուծում է հեղինակը: Այն ճիշտ տպավորությունն է ստեղծվում, որ հոգևոր-մշակութային կյանքը մինչև թագավորության անկունը եղել է պետության հոգացության կենտրոնում:

Վերոհիշյալ հիմնահարցերին Վ. Վարդանյանն անդրադարձել է իր մյուս Աշխատությունում ևս[3], որը չենք մանրամասն ներկայացնում՝ կրկնություններից խուսափելու նպատակով:

Արծրունյաց թագավորության վերջին շրջանի և Սենեքերիմի գաղթի մասին գնահատելի մի հոդված է տպագրել Վ. Իսկանյանը[4]: Հոդվածը մեզ համար հետաքրքրական է այն տեսանկյունից, որ հեղինակը հենվելով բազմաթիվ սկզբնաղբյուրների տեղեկությունների վրա գտնում է, որ Արծրունյաց վերջին թագավոր Սենեքերիմի գաղթը Սեբաստիա տեղի է ունեցել 1022 թվականին: Սակայն, բոլոր հեղինակները այսօր այն կարծիքի են,որ այդ գաղթը, կամ Արծրունիների թագավորության անկումը տեղի է ունեցել 1021-ին: Սրան անդրադառնում ենք, որովհետև եթե խոսք է գնում թագավորության մշակութային կյանքի մասին, ապա կարևոր է ճշտել նրա գոյության ստույգ թվականները:

Վասպուրականի հայոց թագավորության պատմությանը, նրա ապրած հոգևոր-մշակութային կյանքին բավական լայն բաժին է հատկացված ՀԽՍՀ ԳԱ հրատարակված «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի 3-րդ հատորում[5]:

---

[1] Տե՛ս **Վարդանյան Վ. Մ.** , Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Երևան, 1969:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս **Վարդանյան Վրեժ,** Արծրունիները հայոց պատմության մեջ, Երևան, 2002:

[4] **Իսկանյան Վ. Կ.,** Արծրունյաց արտագաղթի մասին, տես «Պատմա-բանասիրական հանդես», 1965, թիվ 3, էջ 67-82:

[5] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., հ. 3-րդ, Երևան, 1976, տե՛ս էջ 309 – 416::

Հատորի Գ բաժինը նվիրված է հայ մշակույթին 9-11-րդ դարերում: Բնականաբար, այդ դպրոցները, գործում էին նաև Վասպուրականում, որոնցից ամենահռչակավորը Նարեկի Վարդապետարանն էր: Ըստ հատորի հողինակների՝ այստեղ ծաղկում են ապրել գրչության արվեստը, մանրանկարչությունը, բնագրերի քննությունը: Հատորում առանձին գլխով ներկայացված է նաև այս շրջանի պատմագրությունը, առանձին վերլուծության են ենթարկված Վասպուրականի թագավորության շրջանի հայ պատմիչների գործերը, գնահատված են դրանք՝ որպես արժեքավոր սկզբնաղբյուրներ:

Հայ փիլիսոփայական մտքի նվաճումները նույնպես չեն անտեսված այս հատորում: Հատկապես կարևորագույն տեղ է հատկացված Գրիգոր Նարեկացուն, որն համարվում է միստիցիզմի խոշորագույն ներկայացուցիչը Հայաստանում: Սրանով հանդերձ ընդունելի չէ արտահայտված այն տեսակետը, որ իր մտքերով և մտածողությամբ ուղիղ կերպով կապվելով Աստծու հետ, Նարեկացին հակադրվել է եկեղեցուն և հոգևորականներին՝ որպես մարդու և Աստծու միջև անտեղի միջնորդների:

Հատորի գեղարվեստական գրականությաւնը նվիրված բաժնում ներկայացված են հիշյալ ժամանակահատվածում նրա զարգացման հիմնական ուղղությունները: Քանի որ գրականության ամենամեծ դեմքը դարձյալ Գրիգոր Նարեկացին էր, ապա՝ բնականաբար գլխավոր անդրադարձը նրան է կատարվել, թեև նրա գեղարվեստական խոսքին տրված շատ գնահատականներ այսօր մերժելի են:

Հատկապես գնահատելի են հատորի ճարտարապետությանը և արվեստին նվիրված բաժինները: Այստեղ վեր են հանված ժամանակաշրջանի արվեստի բնորոշ կողմերը, ցույց են տրված կերպարվեստի զարգացման առանձնահատուկ կողմերը:

Քանի որ թե՛ ճարտարապետության և թե՛ կերպարվեստի առումով էլ Վասպուրական թագավորությունը տվել է գլուխգործոցներ, ապա՝ բնականաբար ներկայացված է տեղի ճարտարապետական դպրոցը, որի հիմնադիրն էր մեծն Մանուելը:

Հատորում Վասպուրականի ճարտարապետության և կերպարվեստի առանձնահատուկ գծերը բացահայտված են Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու օրինակով:

Ընդհանուր առմամբ այս հատորը գնահատելի է նրանով, որ թերևս առաջին անգամ առանձին բաժիններով ներկայացնում է ժամանակի մշակութային կյանքը, դժբախտաբար քրիստոնեական հավատի և եկեղեցու նկատմամբ հաճախ մերժելի հայեցակարգերով և թոնդրակյան աղանդի նկատմամբ դրվատելի խոսքերով:

Այն, որ Գագիկ Արծրունին ոչ միայն քաղաքական գործիչ էր, քաղաքական մտքի յուրօրինակ կրող և դիվանագետ, այլ՝ նաև աստվածաբան-

փիլիսոփա, ապացուցել է դոկտոր Մեսրոպ եպիսկոպոս Գրիգորյանը իր երկու հոդվածներում[1]: Դրանցում քննարկվում է նույն խնդիրը, թե ինչպես է Գագիկ Արծրունին Բյուզանդական կայսր Ռոմանոս Լեկաբանոսին և Տրյուփոն պատրիարքին ուղղված նամակում քննարկելով դավանաբանական խնդիրներ, փորձում հիմքեր գտնել հայ և բյուզանդական եկեղեցիների միավորման համար: Այստեղ կարևորն այն է, որ նա ընդունելով Հիսուսի միաբնակությունը, փիլիսոփայական հնարքներով փորձում է ապացուցել, որ դրա համար կան անհրաժեշտ հիմքերը: Գագիկ Ա-ի «թուղթը» մի ավելորդ վկայություն է Արծրունիների թագավորությունում փիլիսոփայական-աստվածաբանական մտքի զարգացման մասին և այն մասին, որ իրոք աշխարհիկ և հոգևոր իշխանությունները հայոց քրիստոնեական եկեղեցու դավանանքի հարցում առավել քան մոտեցել էին:

Հիմնահարցին առնչվող գնահատելի գործ է դոկտոր Համազասպ Ոսկյանի աշխատությունը[2]:

Այս աշխատությունը գնահատելի է երկու տեսանկյունից: Նախ, ունի սկզբնաղբյուրային արժեք և, երկրորդ, հեղինակն եկեղեցիների պատմությանն անդրադարձել է տարաբնույթ նյութերի ուսումնասիրման ճանապարհով, որոնց նկատմամբ ցույց է տվել քննական մոտեցում:

Աշխատության մեջ մենք հազվագյուտ տեղեկությունների ենք հանդիպում այն եկեղեցիների և նրանց ճարտարապետական կառուցվածքների վերաբերյալ, որոնք կառուցվել են Արծրունյաց թագավորության շրջանում, ինչպես նաև՝ նրանց, որոնք գոյություն ունեին թագավորությունից շատ առաջ և նրանից հետո:

Չկա Վասպուրական աշխարհում մի եկեղեցի կամ շինություն, որ զերծ մնացած լինի հեղինակի ուշադրությունից: Այնտեղ նկարագրված են Վանա ծովի կղզիների վանքերն ու անապատները, ներկայացված են Ռշտունիքի, Վան-Տոսպի, Գնունյաց և Առբերանի վանքերը:

Ներսես Ակինյանի աշխատությունը[3] նվիրված է Աղթամարի կաթողիկոսության պատմությանը: Մեր ուսումնասիրության համար շահեկան է նրա գործի մի գլուխը միայն («Սկզբնաւորութիւն Աղթամարայ կաթողիկոսութեան»): Շահեկան է այն առումով, որ օգնում է ճիշտ պատկերացում կազմելու այն հարցի վերաբերյալ, թե որքան ժամանակ է Աղթամարը հանդիսացել ամենայն հայոց կաթողիկոսի նստավայր: Շատ հաճախ այն

---

[1] **Դոկտոր Մեսրոպ Գրիգորյան,** Գագիկ Արծրունի և Գագիկ Բագրատունի Թագավորների թղթերը Բյուզանդական արքունիքին, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1989, թիվ 3, Նույնի՝ Երկու աստուածաբան թագաւորներ ի նպաստ Գագիկ Արծրունիի Վասպուրականի և Գագիկ Բագրատունիի Անիի, տե՛ս « Էջմիածին», 1986, թիվ 11-12:

[2] Տե՛ս ԴԿՏ. Հ. Համազասպ Ոսկեան, Վասպուրական - Վանի վանքերը, Ա մաս, Վիեննա, 1940:

[3] Տե՛ս **Հ. Ներսէս Վ. Ակինեան,** Գաւազանագիրք Կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920:

տեսակետն է հնչում, որ Ամենայն հայոց կաթողիկոսը Աղթամարն ունեցել է որպես նստավայր բավական երկար ժամանակ: Մինչդեռ իրականում այն տևել է շատ կարճ՝ 929 թվականից մինչև 943 թվականը: Գագիկ Արծրունու մահից հետո Ամենայն հայոց կաթողիկոսի նստավայրը դարձել է Կարսի Արգինա գյուղը: Սակայն, Աղթամարի կաթողիկոսությունը գոյատևել է բավական ժամանակ՝ մինչև Խաչատուր Շիրոյանի մահը (1895 թ), որն օծվել էր կաթողիկոս 1864 թվականին:

Ն. Ակինյանի աշխատության սկզբնամասը այն կարևոր եզրակացությանն է տեղիք տալիս, որ Արծրունիների թագավորությունն այն աստիճանի ազդեցիկ էր, եկեղեցիները, հոգևոր հաստատություններն այնքան շատ էին, որ չնայած Բագրատունիների գերակայությանը, այն դառնում է, թեկուզ կարճատև մի ընթացքում, հայոց կաթողիկոսի նստավայր:

Վասպուրականի Արծրունյաց թագավորության հիմնադրի՝ Գագիկ Արծրունու ժամանակի հրաշակերտի՝ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու ճարտարապետական առանձնահատկությունների, ճարտարապետական ինքնատիպ լուծումների հետ համադրված կերպարվեստի արտահայտության ձևերի մասին բարձր գնահատականով է արտահայտվում Հովսեփ Օրբելին[1]: Նա բախտ է ունեցել այցելելու այդ կղզին և մանրազնին դիտելու Ս. Խաչ եկեղեցին: Իր ուսումնասիրության մեջ նա հետագայում նկարագրել և գնահատել է իր ողջ տեսածն ու զգացածը՝ ճարտարապետական ինքնատիպ և հազվագյուտ լուծումներ, այդ լուծումներին անքակտելիորեն միահյուսված մանրաքանդակներ, աստվածաշնչյան սյուժեների և աշխարհիկ կյանքի դրվագների ինքնօրինակ արտացոլումներ: Ահա թե ինչի է ականատես եղել և այնուհետև նկարագրել Հ. Օրբելին: Նրա աշխատությունը բարձր գնահատականի է արժանի, քանզի ընթերցողի աչքի առջև աստիճանաբար բարձրանում է Ս. Խաչ բացառիկ կոթողի ողջ հրաշակերտ կառուցվածքը:

Հարկավ, այս ամենով չի լրանում այն աշխատությունների ցանկը, որոնք կամ նվիրված են Վասպուրականի Արծրունյաց թագավորության պատմությանը կամ անդրադառնում են դրա գոյության ընթացքում տեղի ունեցած հոգևոր-մշակութային զարթոնքին, կամ էլ արվեստի առանձին գործերի նկարագրությանն ու վերլուծությանը: Բայց, կարծում ենք, որ սրանք էին ամենահիմնականները, քանզի հայեցակարգերի կամ պատմական տեղեկությունների նորությամբ աչքի չեն ընկնում այս թագավո-

[1] **И. А. Орбели**, Памятники армянского зодчества на острове Ахтамар, տես Избранные труды, Москва, 1968:

ության քաղաքական կամ մշակութային կյանքին այս կամ այն չափով առնչվող մյուս աշխատությունները[1]:

Դրանք առանձին-առանձին հարկ չենք համարում ներկայացնել, որովհետև նոր խոսք չեն բերում հայեցակարգային մոտեցումների մշակումների առումով:

Այս ամենից զատ, ուզում ենք շեշտել, որ բավականին առատ նյութեր կան՝ կապված Արծրունյաց թագավորության հոգևոր-մշակութային կյանքի հետ՝ պարբերական մամուլում («Բյուզանդիոն», «Արևելք», «Մուրճ» և այլն): Սակավ նյութեր չի պարունակում նաև Ե. Լալայանի «Ազգագրական հանդեսը»:

Հարկ ենք համարում ավելացնել, որ բավական առատ են Արծրունյաց թագավորության շրջանի գեղարվեստական խոսքին և փիլիսոփայական մտքին վերաբերվող աշխատությունները[2]:

Դրանցում փորձ է արված վեր հանել մեծ բանաստեղծի, փիլիսոփայի,երաժշտի և ուսուցչի կերպարը:

Եվ վերջապես անհանար է չառանձնացնել նշանավոր պատմաբան Բ. Հարությունյանի հետմահու լույս տեսած աշխատությունը[3], որը վերաբերվում է Արշրունիների իշխանական տոհմի մեր պատմության մեջ ունեցած տեղի և դերի պատմաքննական մեթոդաբանությամբ լուսաբանմանը և այնտեղ նոր հայեցակետային մոտեցումներով է մատուցված Վասպուրականի Արծրունյաց թագավորության պատմությունը: Առանց այս աշխատության ուսումնասիրության անհնար է ճշգրտել այն պատճառները, որոնք նպաստեցին նաև հոգևոր մշակութային կյանքի վերելքին թագավորության գոյության շրջանում:

Այս ամենով հանդերձ չի ստեղծվել մի ուսումնասիրություն, որը փորձ անի մատուցելու Վասպուրականի Արծրունյաց թագավորության հոգևոր-մշակութային կյանքն ամբողջությամբ, իր զարգացման բոլոր կողմերով և բնորոշ առանձնահատկություններով:

---

[1] Տե՛ս **Հարությունյան Հ.,** Հայաստանը 9-11-րդ դարերում, Երևան, 1959, **Բարթիկյան Հ.,** Վասպուրականցիները բյուզանդական կայսրության ծառայության մեջ, տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 2000, թիվ 3, էջ 131-151,Մանանդյան Հ,,Երկեր, հ. Զ,, Երևան,1985, Հայ ժողովրդի պատմություն, խմբագիր՝ Ս. Տ. Մելիք-Բախշյան, Երևան, 1975, **Հակոբյան Թ. Խ.,** Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1975 և այլն:

[2] Տե՛ս **Չոպանյան Ա.**, Դեմքեր, Փարիզ, 1924, Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Գիրք 1, Երևան 1944, **Մկրյան Մ.,** Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, **Թահմիզյան Հ.**, Կոմիտասը և Նարեկացու տաղերը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 3 և այլն:

[3] Տե՛ս **Բաբկեն Հարությունյան,** Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, Մեկնարկ, 2016:

Аршак Нерсисян, Историография духовно-культурной жизни королевства Арцруни в Васпуракане - Духовно-культурная жизнь королевства Арцруни в Васпуракане находилась на подъеме. Об этом возвышении свидетельствуют средневековые источники, в основном это работы историков. Здесь представлены не только политическая история, но и культурная сфера. В статье дается оценка и анализ этих источников, а также вопросов, связанных с исследованиями.

Arshak Nersisyan, The historiography of spiritual-cultural life of kingdom Artsruni in Vaspurakan - The spiritual-cultural life of kingdom Artsruni in Vaspurakan was on the rise. This rise is evidenced by medieval sources which are mainly works of historians. There are presented not only the political history but also the cultural sphere. The article assesses and analyzes these sources and also the questions related to studies.